ասէ · զի՞ պիտոյ են այդպիսի բանք 'ի ժողովի աստ ։ Ոստիկանն , երկու Դատաւորք այնքան կռուեցան և անարգեցին զմիմեանս 'ի ժողովի աստ , չիշխեցեր ասել թէ անվայել է , այժմ այս ··· վատ ասելս անվայե՞լ եղեւ · ահա յայտնեցաւ թէ դու եւս 'ի կողմն Յունաց ես , սակայն 'ի վաղիւ պահանջեմ 'ի քէն զդոսա տանել 'ի Դամասկոս · և բարկութեամբ մեկնեցաւ 'ի ժողովոյն , եւ ցրուեցաւ ժողովն լի խռովութեամբ ։

ԳԼՈՒԽ ԻԹ.

Պահանջ Հայոց ։ Անդիմանութիւն Դատաւորին ։ Գանգատ Յունաց առ Կուսակալն ։ Նոյնպէս Ոստիկանին զաղգէն Յունաց ։ Յամառութիւն Դատաւորին չկատարել զգործս Հայոց ։ Ծանր պահանջ նորին ։ Ժողով 'ի Ս · Յարութիւն ։ Քննութիւն տեղւոյն Յովսէփայ Արեմաթացւոյն ։

ԻԲՐԵՒ ցրուեցաւ ժողովն և գնաց իւրաքանչիւր 'ի տեղի իւր , մատուցեալ մի ոմն 'ի բարեկամաց Դատաւորին մեղադրէր զնա առանձինն և ասէր · զի՞նչ գործեցեր այր դու , եթէ յառաջագոյն մի կամ երկու ունէիր թըշնամիս , այժմ բազում եղեն՝ գուցէ միաբանեալ խորհեսցին չարիս զքէն եւ անկանիցիս 'ի վտանգ մեծ · և նորա վարանեալ 'ի միտս իւր ասէր , որպէս յառաջագոյն գանկատանօք ատացեալ էր Հայոց · թէ Նուրի Էֆէնտի է այր խորամանկ , զի եթէ արարից ըստ հայցուածոցն Հայոց, նշանակէ զիս 'ի Կոստանդինուպօլիս +Քեֆիր+ կոչելով, և առաջի պաշտօնէից Տէրութեան կաշառակեր · և տագնապեալ 'ի միտս իւր , կոչեաց առ ինքն զՔաղաքապետն եւ առաքեաց առ գործակալս լինել միջնորդ հաշտութեան · եւ նոցա ժողովեալ 'ի միասին առաքեցին առ նա զդպրապետն դատարանի , և խնդրեցին գիր 'ի նմանէ սակս կատարելոյ զամենայն ինչ ըստ հրամանի Արքային · և նա խոստացաւ բանիւ միայն կատարել որպէս հրամայեսն · եւ դպրապետն դարձ արարեալ անտի պատմեաց նոցա · ապա ազդ արարին Հայոց երթալ առ նա առանձին եւ շահել,